

**ՓԱՍՏԵՐԻ ՑՈՒՑԱԿ ՎԱՐՁԻ  
ՄԱՌԵՑՈՒՄ**  
**Թարմացված է 2020թ. մայիսի 12-ին Վարձի**

**սառեցումը ու՞մ է վերաբերում:**

Արտակարգ իրավիճակի հրամանը վերաբերում է Գլենդել քաղաքի բոլոր բնակելի տարածքներին, բացառությամբ 1995թ. փետրվարի 1-ից հետո կառուցված բնակելի շենքերից, անհատական կոնդոմինիումներից և մեկ ընտանիքի համար նախատեսված տներից (առանձնատներից): Այն նաև վերաբերում է բնակության երկրորդական վայրերին և երկար ժամկետով վարձակալած հյուրանոցի համարներին:

**Վարձի բարձրացման սառեցումը որքա՞ն ժամանակ է ուժի մեջ:**

Վարձի սառեցումը ուժի մեջ է 2020թ. մարտի 24-ից մինչև Արտակարգ իրավիճակի հրամանի ավարտը, որը ներկայումս 2020թ. հունիսի 30-ն է, սակայն անհրաժեշտության դեպքում այն կարող է երկարացվել:

**Եթե տանտերը վարձի բարձրացման ծանուցում է ներկայացրել մինչև վարձի սառեցումը, սակայն այն ուժի մեջ է մտնում 2020թ. ապրիլի 1-ից, վարձակալը պարտավոր է վճարել բարձրացրած գումարը:**

Ո՛չ, վարձակալը կարող է շարունակել վճարել այն գումարը, որը վճարում էր 2020թ. մարտի 24-ի դրությամբ: 2020թ. ապրիլի 1-ից ուժի մեջ մտնող վարձի բարձրացումը անվավեր է, և տանտերը պետք է նոր ծանուցում ներկայացնի Արտակարգ իրավիճակի հրամանի սպառվելուց հետո:

**Տանտերը կարո՞ղ է վարձի բարձրացման ծանուցում ներկայացնել, եթե վարձի բարձրացումը ուժի մեջ է մտնում Արտակարգ դրության հրամանի ավարտից հետո:**

Ո՛չ, տանտերը չի կարող վարձի սառեցման ժամանակահատվածում վարձի բարձրացման ծանուցում ներկայացնել, նույնիսկ եթե բարձրացումը ուժի մեջ է մտնում Արտակարգ իրավիճակի հրամանի ավարտից հետո: Տանտերը պետք է սպասի մինչև Արտակարգ իրավիճակի հրամանի ավարտը, որպեսզի պատշաճ կերպով ներկայացնի վարձի բարձրացման վավեր ծանուցումները:

**Եթե տանտերը վարձի բարձրացման ծանուցում է ներկայացրել մինչև 2020թ մարտի 24-ը, որն ուժի մեջ է մտնում Արտակարգ իրավիճակի հրամանի սպառումից ՀԵՏՈ, վարձի բարձրացումը վավե՞ր է համարվում:**

Ո՛չ, տանտերը պետք է ծանուցումը նորից ներկայացնի Արտակարգ դրության մասին հրամանի գործողության ավարտից հետո:

**Արդյո՞ք պետք է վճարեմ իմ վարձը՝ COVID-19-ի պատճառով հայտարարված արտակարգ դրության ժամանակահատվածում:**

Այո՛, եթե ունեք հնարավորություն, ապա պետք է վճարեք Ձեր պարտավորված վարձը: Սակայն, եթե ի վիճակի չեք այն վճարել COVID-19-ից բխող պատճառներով, ապա կարող եք վարձի վճարում(ներ)ը մինչև 12 ամսով հետաձգել՝ ըստ Արտակարգ իրավիճակի հրամանի <<վտարման ժամանակավոր արգելքի>> մասին բաժնի, որը վերաբերում է վարձը չվճարելու խնդիրներին: